28.12.	կախույթ՝ արտաքին կիրառման համար		կախույթ, որը նախատեսված է արտաքին կիրառման համար
28.13.	կախույթ՝ հարհողային ներմուծման համար		ստերիլ կախույթ, որը նախատեսված է հողախտոչի հարակից հյուսվածքներ ներմուծելու համար
28.14.	կախույթ՝ ենթամաշկային ներմուծման համար		ստերիլ կախույթ, որը նախատեսված է անմիջապես մաշկի տակ ներմուծելու համար
28.15.	կախույթ՝ ներքին ընդունման համար		կախույթ, որը նախատեսված է ներքին ընդունման համար

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
28.16.	կախույթ՝ բերանի խոռոչի լորձաթաղանթի համար	կախույթ՝ բերանի լորձաթաղանթի համար	կախույթ, որը նախատեսված է բերանի խոռոչի լորձաթաղանթին քսելու համար՝ տեղային ազդեցություն գործելու նպատակով
28.17.	կախույթ՝ ներծոցային ներմուծման համար		ստերիլ կախույթ, որը նախատեսված է քթի խոռոչի ծոցեր (հարքթային ծոցեր) ներմուծելու համար
28.18.	կախույթ՝ ներշնչափողային ներմուծման համար		ստերիլ կախույթ, որը նախատեսված է ներկաթեցման միջոցով շնչափող եւ (կամ) բրոնխիոլներ ներմուծելու համար
28.19.	կախույթ ատամի		կախույթ, որը նախատեսված է ատամներին եւ լնդերին քսելու համար
28.20.	կախույթ ուղիղաղիքային		կախույթ, որը նախատեսված է ուղիղ աղիք ներմուծելու համար
29.	Դեղահաբեր		կարծր դոզավորված դեղաձև, որը պարունակում է 1 կամ մի քանի ակտիվ նյութեր՝ օժանդակ նյութերի ավելացմամբ կամ առանց դրանց ավելացման, եւ ստացվում է փոշիների կամ գրանուլների մամլման միջոցով կամ այլ

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	

համապատասխան եղանակով

- | | | |
|-------|--|--|
| 29.1. | դեղահաբեր | դեղահաբեր՝ ներքին ընդունման համար, առանց թաղանթի |
| 29.2. | դեղահաբեր
հեշտոցային | դեղահաբեր՝ առանց թաղանթի կամ թաղանթային ծածկույթով պատված, որոնք նախատեսված են հեշտոց ներմուծելու համար՝ տեղային ազդեցություն գործելու նպատակով |
| 29.3. | դեղահաբեր՝
հեշտոցային, փրփրուն | դեղահաբեր, որոնք նախատեսված են հեշտոց ներմուծելու համար, որոնց բաղադրության մեջ ներառված են օրգանաթթուներ եւ կարբոնատներ կամ հիդրոկարբոնատներ, որոնք ռեակցիայի մեջ են մտնում դրա միջավայրում |
| 29.4. | դեղահաբեր
ներարգանդային | դեղահաբեր, որոնք նախատեսված են արգանդի խոռոչ ներմուծելու համար, ակտիվ նյութերն արտազատում են երկարատեւ ժամանակահատվածի ընթացքում |
| 29.5. | դեղահաբեր՝ բերանի
խոռոչում դիսպերսվող | դեղահաբեր, որոնք նախատեսված են բերանի խոռոչի մեջ տեղադրելու համար, որտեղ դրանք կուլ տալուց առաջ արագ դիսպերսվում են |
| 29.6. | դեղահաբեր | դեղահաբեր՝ առանց թաղանթի կամ թաղանթապատ, կիրառումից առաջ |

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
	դիսպերսվող		համապատասխան լուծիչի մեջ դիսպերսված՝ ներքին ընդունման կախույթի առաջացմամբ
29.7.	դեղահաբեր ներպատվաստման		ստերիլ դեղահաբեր, որոնք ստացվում են մամլման միջոցով, նախատեսված են սովորաբար ենթամաշկային ներպատվաստման համար՝ երկարատև ժամանակահատվածի ընթացքում տեղային կամ համակարգային ազդեցություն գործելու նպատակով
29.8.	դեղահաբեր՝		դեղահաբեր, որոնք տաք ջրին ավելացնելու դեպքում կամ համապատասխան սարքի օգնությամբ (օրինակ՝ ներշնչակի եւ այլն) գոյացնում են գոլորշիներ,
29.9.	ինհալացիաների համար դեղահաբեր՝ հետեյալի պատրաստման համար...		որոնք նախատեսված են շնչառման համար՝ տեղային ազդեցություն գործելու նպատակով
29.9.1	<...> կաթիլներ... (տե՛ս «Կաթիլներ» բաժինը)		դեղահաբեր, որոնք նախատեսված են համապատասխան լուծիչի մեջ լուծման կամ դիսպերսման միջոցով կաթիլներ պատրաստելու համար

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
29.9.2	<...> լուծույթ... (տե՛ս «Լուծույթ» բաժինը)		դեղահաբեր, որոնք նախատեսված են համապատասխան լուծիչի մեջ լուծման միջոցով լուծույթ ստանալու համար: Ներքին ընդունման լուծույթի պատրաստման դեղահաբերի համար օգտագործվում է «լուծվող դեղահաբեր» եզրույթը
29.9.3	<...> կախույթ... (տե՛ս «Կախույթներ» բաժինը)		դեղահաբեր, որոնք նախատեսված են համապատասխան լուծիչի մեջ դիսպերսման միջոցով կախույթ պատրաստելու համար: Ներքին ընդունման կախույթի պատրաստման դեղահաբերի համար օգտագործվում է «դեղահաբեր դիսպերսվող» եզրույթը
29.10.	դեղահաբեր՝ ներծծման համար		դեղահաբեր, որոնք տեղադրվում են բերանի խոռոչում հետագա ներծծման համար՝ սովորաբար տեղային ազդեցություն գործելու նպատակով
29.11.	դեղահաբեր՝ ծամելու համար		դեղահաբեր՝ առանց թաղանթի, որոնք կուլ տալուց առաջ պահանջում են լավ ծամել
29.12.	դեղահաբեր հարթշային		դեղահաբեր, որոնք տեղադրվում են այտի խորշի մեջ՝ համակարգային ազդեցություն գործելու նպատակով

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
29.13.	դեղահաբեր՝ հարթշային, լորձակաչուն (մուկոադիեսիվ)		դեղահաբեր, որոնք սովորաբար պարունակում են լորձաթաղանթին կաչող հիդրոֆիլ պոլիմերներ, տեղադրվում են այտերի լորձաթաղանթին՝ տեւական ժամանակահատվածի ընթացքում համակարգային ազդեցություն գործելու նպատակով
29.14.	դեղահաբեր աղելույծ		դեղահաբեր՝ ներքին ընդունման համար, հետաձգված արտազատմամբ, հատուկ թաղանթով պատված կամ հատուկ նյութեր պարունակող կամ հատուկ տեխնոլոգիայի օգտագործման միջոցով ստացված, որոնք ապահովում են ստամոքսահյութում կայունությունը (գաստրոռեզիստենտությունը) եւ ակտիվ նյութերի սովորական արտազատումն աղիքահյութում: Դեղահաբերի թաղանթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ աղելույծ, թաղանթապատ» եզրույթը: Դեղահաբերի թաղանթային ծածկույթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ աղելույծ, թաղանթային ծածկույթով պատված» եզրույթը:
29.15.	դեղահաբեր՝ աղելույծ, երկարատեւ		դեղահաբեր՝ աղելույծ, հատուկ թաղանթով պատված կամ հատուկ օժանդակ նյութեր պարունակող կամ հատուկ տեխնոլոգիայով ստացված՝ ակտիվ

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
	արտազատմամբ		նյութերի դանդաղ, անընդհատ արտազատման համար: Դեղահաբերի թաղանթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ աղելույծ, երկարատեւ արտազատմամբ, թաղանթապատ» եզրույթը: Դեղահաբերի թաղանթային ծածկույթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ աղելույծ, երկարատեւ արտազատմամբ, թաղանթային ծածկույթով պատված» եզրույթը:
29.16.	դեղահաբեր- լիոֆիլիզատ		կարծր դեղաձև, որը ստացվում է լիոֆիլացման միջոցով ծակոտկեն զանգվածի տեսքով, ունի դեղահաբի ձև եւ նախատեսված է բերանի խոռոչում տեղադրելու համար, որտեղ կուլ տալուց առաջ թքի հետ շփվելիս տեղի է ունենում ակտիվ նյութերի արագ արտազատում
29.17.	դեղահաբեր ենթալեզվային		դեղահաբեր, որոնք տեղադրվում են լեզվի տակ՝ համակարգային ազդեցություն գործելու նպատակով
29.18.	դեղահաբեր թաղանթապատ		դեղահաբեր՝ ներքին ընդունման համար, տարբեր օժանդակ նյութերի եւ մի շարք դեպքերում ակտիվ նյութերի խառնուրդից բաղկացած 1 կամ մի քանի շերտերով պատված

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
29.19.	դեղահաբեր՝ թաղանթային ծածկույթով պատված		դեղահաբեր՝ ներքին ընդունման համար, թաղանթապատ, որոնք շատ բարակ պոլիմերային ծածկույթ են (որպես կանոն դեղահաբի զանգվածի 10 %-ը չգերազանցող)
29.20.	դեղահաբեր լուծվող		դեղահաբեր՝ առանց թաղանթի կամ թաղանթային ծածկույթով պատված, կիրառումից առաջ համապատասխան լուծիչի մեջ լուծված՝ ներքին ընդունման լուծույթի առաջացմամբ
29.21.	դեղահաբեր՝ կարգավորված արտազատմամբ		դեղահաբեր՝ ներքին ընդունման համար, որոնք ստացվել են հատուկ տեխնոլոգիայով, կամ որոնց թաղանթի բաղադրության կամ պարունակության մեջ մտնում են հատուկ օժանդակ նյութեր՝ ակտիվ նյութի արտազատման արագությունը եւ (կամ) ժամանակը եւ (կամ) տեղը փոփոխելու համար: «Կարգավորված արտազատում» եզրույթի օգտագործումը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ «աղելույծ, երկարատեւ արտազատմամբ», «երկարատեւ արտազատմամբ» կամ «աղելույծ» եզրույթները կիրառելի չեն: Դեղահաբերի թաղանթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ կարգավորված արտազատմամբ, թաղանթապատ» եզրույթը: Դեղահաբերի

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	

Թաղանթային ծածկույթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ կարգավորված արտազատմամբ, թաղանթային ծածկույթով պատված» եզրույթը:

29.22. դեղահաբեր՝
երկարատեւ
արտազատմամբ

դեղահաբեր՝ ներքին ընդունման համար, հատուկ թաղանթով պատված կամ հատուկ օժանդակ նյութեր պարունակող կամ հատուկ տեխնոլոգիայով ստացված՝ ակտիվ նյութերի դանդաղ, անընդհատ արտազատմամբ:
Դեղահաբերի թաղանթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ երկարատեւ արտազատմամբ, թաղանթապատ» եզրույթը:
Դեղահաբերի թաղանթային ծածկույթով պատված լինելու դեպքում օգտագործում են «դեղահաբեր՝ երկարատեւ արտազատմամբ, թաղանթային ծածկույթով պատված» եզրույթը

29.23. դեղահաբեր փրփրուն

դեղահաբեր՝ առանց թաղանթի, որոնց բաղադրության մեջ ներառված են օրգանական թթուներ եւ կարբոնատներ կամ հիդրոկարբոնատներ, որոնք ջրի առկայության պայմաններում ռեակցիայի մեջ են մտնում՝ արտազատելով ածխածնի դիօքսիդ: դեղահաբեր փրփրուն՝ նախատեսված ներքին ընդունումից

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	

առաջ ջրի մեջ լուծման կամ դիսպերսման համար

- | | | |
|-------|--|--|
| 30. | Խճուճներ
դեղագործական | դեղաձև, որը նախատեսված է մարմնի բնական անցքեր սահմանափակ ժամանակահատվածով ներմուծելու համար, բաղկացած է փափուկ թելքավոր նյութից, որը տոգորված է ակտիվ նյութով՝ օժանդակ նյութերի ավելացմամբ կամ առանց դրանց ավելացման |
| 30.1. | խճուճներ՝
դեղագործական,
հեշտոցային | խճուճներ դեղագործական՝ նախատեսված հեշտոց ներմուծելու համար |
| 30.2. | խճուճներ՝
դեղագործական,
ինհալացիաների
համար | խճուճներ դեղագործական, որպես կանոն, կլորացված ծայրով եւ բացվածքով համապատասխան գլանաձև ներդրուկների մեջ տեղադրվող՝ նախատեսված քթանցքերի միջով ինհալացիաների համար |
| 4.3. | խճուճներ՝ | խճուճներ դեղագործական, որոնք նախատեսված են ուղիղ աղիք ներմուծելու |

Թիվ՝	Դեղաձեռի անվանումը		Մահմանումը
	ամբողջական	կրճատ	
	դեղագործական, ուղիղաղիքային		համար
30.4.	խծուծներ՝ դեղագործական, ականջի		խծուծներ, որոնք նախատեսված են արտաքին լսողական անցուղի ներմուծելու համար
31.	Լուծամզուք		դեղաձեռ, որը խտացված հանուկ է դեղաբուսական հումքից, առավել հազվադեպ կենդանական ծագման հումքից
31.1.	լուծամզուք՝ տեղային կիրառման համար		լուծամզուք, որը նախատեսված է տեղային կիրառման համար (այդ թվում՝ նոսրացումից հետո)
31.2.	լուծամզուք՝ արտաքին կիրառման համար		լուծամզուք, որը նախատեսված է արտաքին կիրառման համար (այդ թվում՝ նոսրացումից հետո)
31.3.	լուծամզուք՝ ներքին ընդունման համար		լուծամզուք, որը նախատեսված է ներքին ընդունման համար (այդ թվում՝ նոսրացումից հետո)
32.	Էմուլսիա		հեղուկ դեղաձեռ, որը հետերոգեն երկֆազ դիսպերս համակարգ է հեղուկ

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	

դիսպերսային ֆազով եւ հեղուկ դիսպերս միջավայրով

- | | | |
|-------|--|--|
| 32.1. | Էմուլսիա հեշտոցային | Էմուլսիա, որը նախատեսված է հեշտոց ներմուծելու համար՝ տեղային ազդեցություն գործելու նպատակով |
| 32.2. | Էմուլսիա ներարգանդային | Էմուլսիա, որը նախատեսված է արգանդի խոռոչ ներմուծելու համար |
| 32.3. | Էմուլսիա՝ ներերակային ներմուծման համար | ստերիլ էմուլսիա, որը նախատեսված է երակ ներմուծելու համար |
| 32.4. | Էմուլսիա՝ ներմկանային ներմուծման համար | ստերիլ էմուլսիա, որը նախատեսված է մկանային հյուսվածք ներմուծելու համար |
| 32.5. | Էմուլսիա՝ ստամոքսաղիքային ներմուծման համար | Էմուլսիա, որը նախատեսված է համապատասխան սարքի օգնությամբ ստամոքս կամ տասներկուամատնյա աղիք ներմուծելու համար |
| 32.6. | Էմուլսիա՝ | Էմուլսիա, որը նախատեսված է համապատասխան սարքի (օրինակ՝ |

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
	ինհալացիաների համար		ներուլայգերի) օգնությամբ ինհալացիաների ցողացիքի փոխակերպվելու համար կամ էմուլսիա, որը տաք ջրին ավելացնելու դեպքում կամ համապատասխան սարքի օգնությամբ (օրինակ՝ ներշնչակի եւ այլն) գոյացնում է գոլորշիներ, որոնք նախատեսված են շնչառման համար՝ տեղային ազդեցություն գործելու նպատակով
32.7.	էմուլսիա ինֆուզիոն		ստերիլ «յուղը ջրում» տիպի էմուլսիա, որը նախատեսված է հարմարսողական (պարենտերալ) կիրառման համար՝ ինֆուզիոն համակարգերի օգնությամբ շրջանառվող արյան հոսք զգալի ծավալով, որպես կանոն, դանդաղ, հաճախ կաթիլային ներմուծման միջոցով
32.8.	էմուլսիա ներարկման		ստերիլ «յուղը ջրում» տիպի էմուլսիա, որը նախատեսված է ներարկումների միջոցով որոշակի հյուսվածքներ կամ օրգաններ կամ արյունատար հուն ներմուծելու համար
32.9.	էմուլսիա՝ տեղային կիրառման համար		էմուլսիա, որը նախատեսված է տեղային կիրառման համար

Թիվ՝	Դեղաձեռի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
32.10.	Էմուլսիա՝ արտաքին կիրառման համար		Էմուլսիա, որը նախատեսված է արտաքին կիրառման համար
32.11.	Էմուլսիա՝ ներքին ընդունման համար		Էմուլսիա, որը նախատեսված է ներքին ընդունման համար
32.12.	Էմուլսիա՝ լսողական անցուղու լվացման համար		Էմուլսիա, որը նախատեսված է լսողական անցուղու լվացման համար
32.13.	Էմուլսիա ատամի		Էմուլսիա, որը նախատեսված է ատամներին եւ լնդերին քսելու համար
32.14.	Էմուլսիա ուղիղաղիքային		Էմուլսիա, որը նախատեսված է ուղիղ աղիք ներմուծման համար
33.	Այլ դեղաձեռեր		
33.1.	սպունգ դեղագործական		դեղաձեռ, որը ծակոտկեն, կլանող նյութ է, ակտիվ նյութով տոգորված կամ ակտիվ նյութ հանդիսացող՝ օժանդակ նյութերի ավելացմամբ կամ առանց դրանց ավելացման

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
33.2.	դրամե		կարծր դոզավորված դեղաձև՝ ներքին ընդունման համար, որը ստացվում է օժանդակ նյութերին խառնած ակտիվ նյութերը չեզոք օժանդակ նյութերից ստացված գրանուլների վրա շերտ առ շերտ քսելու միջոցով
33.3.	մատիտ դեղագործական		կարծր դեղաձև՝ կլորացված ծայրով գլանաձև կամ կոնաձև մատիտի տեսքով, որը նախատեսված է արտաքին կիրառման համար՝ տեղային ազդեցություն գործելու նպատակով, եւ բաղկացած է միայն ակտիվ նյութերից (1 կամ մի քանի) կամ ներկայացված է համապատասխան հիմքով, որում հավասարաչափ բաշխված են ակտիվ նյութերը
33.4.	Եղունգների լաք դեղագործական		հեղուկ դեղաձև, որն ակտիվ նյութերի անջուր լուծույթ է, նախատեսված եղնգային թիթեղի վրա քսելու համար՝ ցնդող նյութերի գոլորշիացումից հետո լաքային ծածկույթ ստանալու նպատակով
33.5.	սառնաշաքարներ դեղագործական		կարծր դոզավորված դեղաձև, որը ստացվում է կաղապարների մեջ լցման եղանակով, պարունակում է համապատասխան հիմքում հավասարաչափ բաշխված 1 կամ մի քանի ակտիվ նյութեր եւ նախատեսված է ներծծման համար՝ բերանի խոռոչում եւ կոկորդում տեղային ազդեցություն գործելու նպատակով

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Մահմանումը
	ամբողջական	կրճատ	
33.6.	պաստեղներ դեղագործական		կարծր դոզավորված դեղաձև, որն առաձգական-պլաստիկ հիմք է՝ դրանում ակտիվ նյութի (ակտիվ նյութերի) հավասարաչափ բաշխմամբ, նախատեսված է ներծծման համար՝ բերանի խոռոչում եւ կոկորդում տեղային ազդեցություն գործելու նպատակով
33.7.	թիթեղներ դեղագործական		կարծր դեղաձև, որը հիմքից եւ դրանում հավասարաչափ բաշխված ակտիվ նյութից (նյութերից) բաղկացած որոշակի չափի թիթեղ է, նախատեսված է վերքային մակերեսի վրա տեղադրելու եւ երկարատեւ ժամանակահատվածի ընթացքում տեղային ազդեցություն գործելու համար
33.8.	սալիկներ		կարծր դեղաձև, որը պլաստիկ զանգված է դրանում հավասարաչափ բաշխված ակտիվ նյութով, ունի որոշակի չափի սալիկի ձև եւ նախատեսված է ամբողջությամբ կամ մասերով ներքին ընդունման համար
33.9.	ծամոն դեղագործական		կարծր դոզավորված «ռետինանման» կոնսիստենցիայի դեղաձև, որը նախատեսված է առանց հետագա կուլ տալու որոշակի ժամանակահատվածի ընթացքում ծամելու համար՝ բերանի խոռոչում եւ կոկորդում տեղային ազդեցություն կամ համակարգային ազդեցություն գործելու նպատակով

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	
33.10.	անձեռոցիկներ՝ դեղագործական, ներծծվող		կարծր դեղաձև, որն անձեռոցիկի տեսքով կենսադեգրադացվող նյութ է, նախատեսված վերքային մակերեսի վրա տեղադրման համար, պարունակում է ակտիվ նյութ՝ երկարատեւ ժամանակահատվածի ընթացքում տեղային ազդեցություն գործելու նպատակով
33.11.	օձառահեղուկ (շամպուն) դեղագործական		հեղուկ կամ փափուկ հեշտ փրփրող դեղաձև, որը պարունակում է ակտիվ եւ օժանդակ նյութեր, այդ թվում՝ մակերեսային-ակտիվ նյութեր, նախատեսված է մազերին եւ գլխի մաշկին քսելու եւ հետո ջրով լվանալու համար
33.12.	Էլիքսիր հոմեոպատիկ		ներքին ընդունման հեղուկ դեղաձև՝ դեղաբուսական հումքի եւ օժանդակ նյութերի 1 կամ մի քանի հանուկների ջրասպիրտային խառնուրդի տեսքով՝ շաքարի եւ (կամ) շաքարի կոլերի եւ (կամ) մեղրի, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում ակտիվ նյութերի ավելացմամբ
Ա.1.	օփոդելոկ		օձառային հեղուկաքսուք, որը բաղկացած է նոսրացումով հոմեոպատիկ պատրաստուկներում ակտիվ բաղադրիչների խառնուրդից եւ հիմքից
Ա.2.	դեղահատեր		կարծր դոզավորված դեղաձև՝ ներքին ընդունման համար, 0,1-0,5 գ զանգվածով

Թիվ՝	Դեղաձևի անվանումը		Սահմանումը
	ամբողջական	կրճատ	

պինդ գնդիկների տեսքով

- | | | |
|------|---|--|
| Բ. | Լուծիչ | հեղուկ կամ լուծույթ, որը օգտագործվում է որպես դեղապատրաստուկների համար լուծիչ (նոսրացուցիչ) |
| Բ.1. | Լուծիչ՝ ներարկման դեղաձևերի պատրաստման համար | ստերիլ լուծիչ՝ դեղաձևերի համար, որը նախատեսված է ներարկման (ինֆուզիայի) միջոցով ներմուծման համար |
| Բ.2. | Լուծիչ՝ ներարկման պատվաստանյութի պատրաստման համար | ստերիլ լուծիչ՝ պատվաստանյութի համար, որը նախատեսված է ներարկման միջոցով ներմուծման համար |

Պարզաբանումներ

Սույն անվանացանկը մշակվել է դեղաձեւերի այն անվանումները միասնականացնելու նպատակով, որոնք օգտագործվում են դեղապատրաստուկների մակնշման, դեղապատրաստուկների գրանցման դոսյեի կազմման, Եվրասիական տնտեսական միության գրանցված դեղամիջոցների միասնական ռեեստրի եւ դեղամիջոցների շրջանառության ոլորտում տեղեկատվական տվյալների բազաների ձեւավորման, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների դեղագրքերի ներդաշնակեցման ժամանակ:


Դեղաձեւի անվանումը մտնում է դեղապատրաստուկի մասին այն պարտադիր տեղեկատվության կազմի մեջ, որը ներկայացվում է պացիենտին եւ առողջապահության ոլորտի մասնագետներին դեղապատրաստուկների կիրառման ցուցումներում, պաշտոնական եւ տեղեկատու հրատարակություններում, էլեկտրոնային տեղեկատվա-որոնողական համակարգերում: Այն ներկայացվում է դեղապատրաստուկի մակնշման մեջ եւ թույլ է տալիս տարբերակել տարբեր դեղաձեւերով, սակայն միեւնոյն առետրային անվանման ներքո թողարկվող դեղապատրաստուկները: Դեղաձեւի (հատկապես դրա անվանման) մասին տեղեկատվությունը, որպես դեղապատրաստուկի մասին պարտադիր տեղեկատվության մաս, պետք է լինի ձեւի առումով առավելագույնս ստանդարտացված եւ բովանդակային առումով հասկանալի: Դեղաձեւերի անվանումները պետք է լինեն միասնականացված, հասկանալի ինչպես բժշկին, այնպես էլ պացիենտին եւ փոխանցեն կոնկրետ դեղապատրաստուկի հատկությունների եւ կիրառման ոլորտի մասին անհրաժեշտ նվազագույն տեղեկատվությունը:

Դեղաձեւ՝ դեղապատրաստուկի վիճակ, որը համապատասխանում է դրա ներմուծման եւ կիրառման եղանակներին եւ ապահովում է անհրաժեշտ էֆեկտին հասնելը.

դեղաձեւի անվանում՝ բառ կամ բառակապակցություն, որն արտահայտում է դեղաձեւի մասին եզակի հասկացություն եւ այն տարբերակում այլ դեղաձեւերից: Դեղաձեւերի տեսակների անվանումների ամբողջությունը (ցանկը) կազմում է դրանց անվանացանկը:

Սույն անվանացանկը ներառում է դեղաձեւերի անվանումների 2 տեսակ՝ ամբողջական եւ կրճատ: Դեղաձեւի կրճատ անվանումը նախատեսված է դեղապատրաստուկի առաջնային փաթեթվածքի վրա մականշվածքում նշելու համար՝ տեղեկատվական դաշտի անբավարարության դեպքում, բոլոր մնացած դեպքերում կիրառվում է դեղաձեւերի ամբողջական անվանումը:

Որպես կանոն, դեղաձեւի անվանումը ներառում է հիմնական տարրը եւ մեկ կամ մի քանի լրացուցիչ տարրեր (հատկանիշներ): Դեղաձեւերի անվանումների բաղադրիչ տարրերը ներկայացված են 1-ին նկարում:



Նկ. 1

Դեղաձեւի անվանման հիմնական տարրն ընդհանուր եզրույթ է, որը նշանակում է ձեւերի ինքնուրույն, հարաբերականորեն միատարր խումբ: Այդպիսի եզրույթների շարքին են դասվում «դեղահաբեր», «դեղապատիճներ», «լուծույթ», «քսուք» եւ այլ եզրույթներ:

Դեղաձեւի անվանման լրացուցիչ տարր է այն բառը կամ բառակապակցությունը, որն արտացոլում է դեղաձեւի որոշակի բնութագիրը (լրացուցիչ հատկանիշը):


Դեղաձեւերի անվանումները կարող են ներառել մեկ կամ մի քանի լրացուցիչ տարրեր, որոնք բնութագրում են դեղաձեւի հատկությունները, օրինակ՝ ակտիվ նյութերի կարգավորվող արտազատման տեսակը («դեղապատիճներ՝ երկարատեւ արտազատմամբ»), կիրառման համար պատրաստ լինելը («փոշի՝ ներարկման լուծույթ պատրաստելու համար»), ներմուծման եղանակը («հեղուկ՝ ինհալացիաների համար»), ներմուծման ուղին («լուծույթ՝ ներմկանային ներմուծման համար»), արտադրության տեխնոլոգիայի առանձնահատկությունները («դեղահաբեր՝ թաղանթային ծածկույթով պատված»), բաժանումը դեղաչափերի («ցողաշիթ՝ քթի, դոզավորված»), հիվանդների տարիքային խումբը («մոմիկներ՝ ուղիղաղիքային, երեխաների համար»), նշանակությունը կամ կիրառման ոլորտը («մածուկ ատամնաբուժական»):

Ընդհանուր առմամբ դեղաձեւի անվանման հիմնական տարրը նշելուց հետո նշվում է ներմուծման ուղին, այնուհետեւ հատկություններն ու տեխնոլոգիական հատկանիշները: Օրինակ՝ «կախույթ՝ ներարկման համար, երկարատեւ արտազատմամբ» կամ «դեղահաբեր՝ երկարատեւ արտազատմամբ, թաղանթապատ»:

Դեղաձեւի անվանումը կարող է բաղկացած լինել միայն հիմնական տարրից: Մի շարք դեպքերում հիմնական տարրը բավարար է եւ օգտագործվում է որպես դեղաձեւի ինքնուրույն անվանում՝ առանց լրացուցիչ տարրերի նշման: Օրինակ՝ «դեղահաբեր» եզրույթն առանց լրացուցիչ տարրերի նշանակում է՝ դեղահաբեր՝ սովորական արտազատմամբ, թաղանթով չպատված, նախատեսված ներքին ընդունման համար (բերանի խոռոչում տեղադրելուց հետո կուլ տալու միջոցով կիրառման եղանակով):

Դեղաձեւի անվանման տարածված լրացուցիչ տարր է կիրառման համար պատրաստ լինելու հատկանիշը: Տվյալ տարրը օգտագործվում է այն դեպքերում, երբ դեղաձեւը, որով թողարկվում է դեղապատրաստուկը (սկզբնական ձեւ)

տարբերվում է այն դեղաձեռից, որով այն անմիջականորեն կիրառվում է (կիրառման ձեռը): Այսինքն՝ դեղաձեռը պահանջում է սպառողի կամ բժշկական անձնակազմի կողմից լրացուցիչ փոխակերպման (օրինակ՝ լուծում, նոսրացում, դիսպերսում) անցկացում՝ անմիջականորեն պացիենտին ներմուծման համար պիտանի վերջնական դեղաձեռ ստանալու նպատակով: Սկզբնական դեղաձեռի եւ ներմուծումից առաջ փոխակերպում պահանջող դեղաձեռի կիրառման ձեռի միջեւ փոխկապակցվածությունը բերված է 2-րդ նկարում:



Նկ. 2

Ներմուծումից առաջ փոխակերպում պահանջող դեղաձեռերի դեպքում անվանումը ներառում է երկու ձեռերի (այսինքն՝ հիմնական տարրերի) անվանումները, որոնք իրար են միանում «պատրաստման համար» բառակապակցությամբ լրացուցիչ այնպիսի տարրերի ավելացմամբ, ինչպիսիք են ներմուծման ուղու հատկանիշը կամ կիրառման եղանակը (կիրառման ձեռի համար): Օրինակ՝ «լիոֆիլիզատ ներերակային ներմուծման լուծույթ պատրաստելու համար», որտեղ՝ «լիոֆիլիզատ»-ը սկզբնական ձեռն է, «լուծույթ»-ը՝ կիրառման ձեռը, «պատրաստման համար»-ը՝ կիրառման համար պատրաստ լինելու հատկանիշը, «ներերակային ներմուծման համար»-ը՝ ներմուծման ուղու հատկանիշը:

Որոշ դեպքերում անվանումներն օգտագործվում են՝ առանց նշելու կիրառման ձեռը, ներմուծման ուղու հատկանիշը եւ «պատրաստման համար» բառակապակցությունը, օրինակ՝ «դեղահաբեր՝ ներքին ընդունման լուծույթ պատրաստելու համար» դեղաձեռի անվանման առաջարկվող ձեռն է «լուծվող դեղահաբեր»-ը:

Այնպիսի լրացուցիչ տարրեր, ինչպիսիք են կիրառման համար պատրաստ լինելը եւ ներմուծման ուղին, չեն օգտագործվում այն դեղապատրաստուկների համար, որոնք ջրային հանուկների (թուրմեր կամ եփուկներ) բաժնեծրարված դեղաբուսական հումք են (ամբողջական, մանրացրած, փոշի):

Այն դեպքերում, երբ սկզբնական ձեւի եւ կիրառման ձեւի ֆիզիկական վիճակը նույնն է (օրինակ՝ լուծույթ), բայց անմիջական կիրառումից առաջ անհրաժեշտ է պացիենտի կամ բժշկական անձնակազմի կողմից որոշակի գործողությունների (մասնավորապես՝ նոսրացման) անցկացում, որպես սկզբնական ձեւը նշող հիմնական տարր օգտագործվում է «խտանյութ» եզրույթը: Օրինակ՝ եթե սկզբնական ձեւը լուծույթ է, որը երակ ներմուծելուց առաջ անհրաժեշտ է նոսրացնել համապատասխան լուծիչում (արդյունքում կիրառման ձեւը նույնպես լուծույթ է), դեղաձեւի առաջարկվող անվանումն է «խտանյութ՝ ներերակային ներմուծման լուծույթ պատրաստելու համար»: Եթե այդ դեղաձեւը կարող է կիրառվել ինչպես նոսրացումից հետո, այնպես էլ առանց դրա, ապա «խտանյութ» եզրույթը չի օգտագործվում: Օրինակ՝ եթե առանց նոսրացման լուծույթը ներմուծվում է ներմկանային եղանակով, իսկ նոսրացումից հետո՝ ներերակային, ինֆուզիոն եղանակով, ապա դեղաձեւի առաջարկվող անվանումն է «լուծույթ՝ ներմկանային ներմուծման եւ ինֆուզիաների համար»:

Այն դեպքում, երբ դեղաձեւի սկզբնական ձեւի փոխակերպումը կիրառման ձեւի երկփուլ գործընթաց է, միջանկյալ ձեւը նշելու համար կիրառվում է «խտանյութ» եզրույթը: Օրինակ՝ եթե լիոֆիլիզատը սկզբում պետք է լուծվի ոչ մեծ քանակությամբ լուծիչի մեջ, որից հետո ստացված լուծույթը նախքան ինֆուզիոն եղանակով ներմուծումը պետք է լրացուցիչ լուծվի ավելի մեծ քանակությամբ լուծիչի մեջ, դեղաձեւի առաջարկվող անվանումն է «լիոֆիլիզատ՝ ինֆուզիոն լուծույթի պատրաստման խտանյութ պատրաստելու համար»: Եթե այդ դեղաձեւը կարող է ներմուծվել ինչպես լրացուցիչ նոսրացումից հետո, այնպես էլ առանց դրա, «խտանյութ» եզրույթը չի օգտագործվում (այսինքն՝ «լիոֆիլիզատ՝ ինֆուզիոն լուծույթ պատրաստելու համար»):

Դեղաձեւերի անվանումներում առավել հաճախ օգտագործվող լրացուցիչ տարրն է ներմուծման ուղու կամ կիրառման եղանակի հատկանիշը: Որոշ դեղաձեւերի համար ներմուծման ուղու հատկանիշն անվանման մեջ չի ներառվում: Օրինակ՝ ներքին ընդունման համար նախատեսված դեղահաբերի, դեղապատիճների, գրանուլների, դրաժենների, թուրմերի եւ օշարակների համար օգտագործվում են համապատասխանաբար հետեւյալ անվանումները՝ «դեղահաբեր», «դեղապատիճներ», «գրանուլներ», «դրաժե», «թուրմ», «օշարակ»՝ առանց «ներքին ընդունման համար» լրացուցիչ տարրի: Հետեւաբար, այդ անվանումները բաղկացած են միայն մեկ հիմնական տարրից եւ հատկանշում են այն դեղաձեւերը, որոնք նախատեսված են բերանի խոռոչում տեղադրումից հետո կուլ տալու համար: Ներմուծման այլ ուղիների կամ կիրառման եղանակների դեպքում այդ անվանումներին ավելացվում են համապատասխան լրացուցիչ տարրեր, օրինակ՝ «դեղահաբեր հեշտոցային», «դեղապատիճներ ուղիղաղիքային», «թուրմ՝ տեղային կիրառման համար», «գրանուլներ ներծծման»: Ներմուծման ուղու կամ կիրառման եղանակի հատկանիշը չի նշվում նաեւ սույն անվանացանկում բերված մի քանի այլ դեղաձեւերի համար (օրինակ՝ օճառահեղուկը, բժշկական գազը, բաժնեծրարված դեղաբուսական հումք հանդիսացող դեղապատրաստուկները եւ այլն): Դեպքերի մեծամասնության ժամանակ ներմուծման ուղու կամ կիրառման եղանակի տեսքով լրացուցիչ տարրն ավելացվում է հիմնական տարրին:

Եթե դեղաձեւի համար նախատեսված են այլընտրանքային ներմուծման ուղիներ կամ կիրառման եղանակներ, ապա ձեւավորվում է համակցված անվանում, որում ներմուծման ուղիները կամ կիրառման եղանակները թվարկվում են որպէս դեղաձեւի անվանման լրացուցիչ տարրեր, օրինակ՝ «ակնակաթիլներ եւ ականջի կաթիլներ», «մոմիկներ՝ հեշտոցային եւ ուղիղաղիքային», «լուծույթ՝ ներերակային եւ ներմկանային ներմուծման համար»: Հնարավոր տարբերակների բազմազանությամբ պայմանավորված՝ համակցված անվանումները սույն անվանացանկում ընդգրկված չեն:

Համակցված անվանումները պետք է լինեն հնարավորինս կարճ, բայց անհրաժեշտ տեղեկատվությունը պացիենտին, բուժաշխատողին, դեղագործական

ուորտի մասնագետին ներկայացնելու համար բավարար: Հաշվի առնելով, որ մեկ դեղապատրաստուկը կարող է ունենալ մի քանի այլընտրանքային ներմուծման ուղիներ կամ կիրառման եղանակներ, ավելորդ ծավալուն անվանումներից խուսափելու համար ներկայացվել են հետևյալ ընդհանրական եզրույթները՝

«արտաքին կիրառում» ասելով հասկանում ենք դեղապատրաստուկը չվնասված եւ (կամ) վնասված մաշկի (այդ թվում՝ վերքային եւ (կամ) այրվածքային մակերեսների) եւ (կամ) մազերի եւ (կամ) եղունգների վրա քսելը: «Արտաքին կիրառման համար» եզրույթն օգտագործվում է այն դեղաձևերի համար, որոնք նախատեսված են կիրառման նման եղանակներից մեկի կամ մի քանիսի համար: Բացառություն են կազմում «լաք եղունգների» («արտաքին կիրառման» ընդհանրական եզրույթն օգտագործելու փոխարեն կոնկրետացվում է քսելու տեղը) եւ «օճառահեղուկ» (եզրույթը կիրառման եղանակի կոնկրետացում չի պահանջում) դեղաձևերը.

«տեղային կիրառում» ասելով հասկանում ենք դեղապատրաստուկը լորձաթաղանթներին քսելը (այդ թվում՝ աչքի, քթի, ուղիղաղիքային, հեշտոցային կիրառումը, լնդերի, բերանի խոռոչի լորձաթաղանթին քսելը եւ այլն), ինչպես նաեւ արտաքին լսողական անցուղի ներմուծելը: «Տեղային կիրառման համար» եզրույթն օգտագործվում է այն դեպքերում, երբ դեղաձևը նախատեսված է տեղային կիրառմանը վերաբերող կիրառման երեք կամ ավելի եղանակների համար: Օրինակ՝ եթե քսուքը նախատեսված է քթի եւ ականջի կիրառման, ինչպես նաեւ լնդերին քսելու համար, ապա դեղաձևի առաջարկվող անվանումն է «քսուք՝ տեղային կիրառման համար»: Այդ եզրույթն օգտագործվում է այն դեպքերում, երբ դեղաձևի կիրառման հրահանգում նշվում է լորձաթաղանթներին քսելը՝ առանց դրանց կոնկրետացման: Տեղային կիրառմանը վերաբերող մեկ կամ երկու ներմուծման ուղիների դեպքում դեղաձևի անվանման մեջ նշվում են ներմուծման այդ ուղիները, օրինակ՝ «քսուք ուղիղաղիքային», «աչքի գել եւ ականջի գել».

բերանի խոռոչի հիվանդությունների բուժման ժամանակ տեղային կիրառման համար դեղաձևի անվանման մեջ այն դեպքերում, երբ դեղաձևը նախատեսված է

երեք եւ ավելի կիրառման եղանակների համար (օրինակ՝ պերիօդոնտալ, ատամների քսելու, լնդերին քսելու, բերանի խոռոչի լորձաթաղանթին քսելու եւ այլն), օգտագործվում է «ատամնաբուժական» եզրույթը (օրինակ՝ «գել ատամնաբուժական»)։ Մեկ կամ երկու կիրառման եղանակների դեպքում դեղաձեւի անվանման մեջ նշվում են ներմուծման այդ ուղիները, օրինակ՝ «մածուկ ատամի», «քսուք՝ լնդերին քսելու համար, եւ պերիօդոնտալ»։

«ներարկման համար» եզրույթն ընդհանրական է այն դեղաձեւերի համար, որոնք նախատեսված են ներարկումների միջոցով ներմուծման ուղիների համար։ Այդ եզրույթն օգտագործվում է այն դեպքերում, երբ դեղապատրաստուկն ունի ներարկումների միջոցով երեք կամ ավելի այլընտրանքային ներմուծման ուղիներ։ Օրինակ՝ եթե լուծույթը նախատեսված է ներերակային, ներզարկերակային, ներմկանային եւ ներմաշկային ներմուծման համար, օգտագործվում է «լուծույթ՝ ներարկման համար» անվանումը։ Ներարկումների միջոցով մեկ կամ ավելի ներմուծման ուղիների դեպքում դեղաձեւի անվանման մեջ նշվում են ներմուծման այդ ուղիները, օրինակ՝ «լուծույթ՝ ենթամկանային ներմուծման համար», «էմուլսիա՝ ներերակային եւ ներմկանային ներմուծման համար»։ Մի շարք դեպքերում համակցված անվանման ձեւավորման համար թույլատրվում է ներմուծման մի քանի ներանոթային ուղիների միավորումը (ներերակային, ներզարկերակային, ներպսակային) «ներանոթային ներմուծում» եզրույթի ներքո։

«ինֆուզիոն» եզրույթն օգտագործվում է այն դեղաձեւերի համար, որոնք նախատեսված են ինֆուզիոն համակարգերի օգնությամբ շրջանառվող արյան հոսք մեծ ծավալով, որպես կանոն, դանդաղ, հաճախ կաթիլային ներմուծման համար։ Այդ եզրույթով, առանց ներմուծման ուղու հստակեցման, նշվում է ներերակային ինֆուզիան։ Այլ դեպքերում դեղաձեւի անվանման ավելացվում է ներմուծման ուղու լրացուցիչ հատկանիշը, օրինակ՝ «լուծույթ՝ ենթամաշկային, ինֆուզիոն»։ Այն դեպքերում, երբ ներմուծման միեւնույն ուղին կարող է իրականացվել ինչպես ինֆուզիայի, այնպես էլ ներարկման եղանակով, «ինֆուզիոն» եզրույթը չի օգտագործվում։ Օրինակ՝ եթե լուծույթը նախատեսված է երակի մեջ ինֆուզիայի եւ ներարկման (շիթային, բոյուսային եւ այլն) եղանակով

ներմուծելու համար, ապա դեղաձեւի առաջարկվող անվանումն է «լուծույթ՝ ներերակային ներմուծման համար»:

Ներարկման եւ ինֆուզիոն դեղաձեւերի համակցված անվանումները նաեւ ձեւավորվում են՝ հաշվի առնելով նշված սկզբունքները, օրինակ՝

էթե լուծույթը ներմուծվում է ներմկանային ներարկման եւ ներերակային ինֆուզիոն ճանապարհով, ապա դեղաձեւի առաջարկվող անվանումն է «լուծույթ՝ ներմկանային ներմուծման եւ ինֆուզիաների համար».

էթե լուծույթը ներմուծվում է ներմկանային եւ ներերակային ներարկման եւ ներերակային ինֆուզիոն ճանապարհով, ապա դեղաձեւի առաջարկվող անվանումն է «լուծույթ՝ ներմկանային եւ ներերակային ներմուծման համար».

էթե լուծույթը ներմուծվում է ներարկման երեք կամ ավելի ուղիներով (օրինակ՝ ներմկանային, ներերակային, ենթամաշկային եւ ներմաշկային) եւ ներերակային ինֆուզիոն ճանապարհով, ապա դեղաձեւի առաջարկվող անվանումն է «լուծույթ՝ ներարկումների եւ ինֆուզիաների համար»:

Դեղաձեւի անվանման լրացուցիչ տարրը դեղաձեւերից ակտիվ նյութերի կարգավորված արտադատման տեսակն է:

Սովորական արտադատմամբ դեղաձեւերը բնութագրվում են այնպիսի ակտիվ նյութի արտադատմամբ, որը չի կարգավորվում հատուկ օժանդակ նյութերի ներմուծման եւ (կամ) արտադրության հատուկ տեխնոլոգիայի միջոցով: Սովորական արտադատմամբ կարծր դեղաձեւերի դեպքում ակտիվ նյութի լուծման ուղղվածությունը մեծամասամբ պայմանավորվում է սեփական հատկություններով: «Սովորական արտադատում» եզրույթը դեղաձեւերի անվանումներում որպէս լրացուցիչ տարր չի օգտագործվում: Օրինակ՝ սովորական արտադատմամբ դեղահաբերի համար դեղաձեւի առաջարկվող անվանումն է «դեղահաբեր»-ը:

Կարգավորվող արտադատմամբ դեղաձեւերը բնութագրվում են ակտիվ նյութերի արտադատման արագությամբ եւ (կամ) ժամանակով եւ (կամ) տեղով,

որոնք տարբերվում են նույն ներմուծման ուղով սովորական արտագատմամբ դեղաձեւերի արտագատման միւլենույն բնութագրիչներից: Արտագատման կարգավորումը կատարվում է թաղանթով պատված հատուկ օժանդակ նյութերի եւ (կամ) արտադրության հատուկ տեխնոլոգիայի կիրառման միջոցով: Կարգավորվող արտագատմամբ դեղաձեւերը ներառում են դանդաղ, անընդհատ (երկարատեւ) արտագատմամբ, հետաձգված արտագատմամբ (աղելույծ դեղաձեւեր) եւ բաբախող (ընդհատվող) արտագատմամբ դեղաձեւեր: «Կարգավորված արտագատում» եզրույթի օգտագործումը հնարավոր է միայն այն դեպքերում, երբ «աղելույծ, երկարատեւ արտագատմամբ», «երկարատեւ արտագատմամբ» կամ «աղելույծ» եզրույթները կիրառելի չեն: Օրինակ՝

Եթե դեղապատիճները բնութագրվում են ստամոքսահյութի ազդեցության նկատմամբ կայունությամբ եւ աղիներում ակտիվ նյութերի արտագատմամբ, ապա դեղաձեւի առաջարկվող անվանումն է «աղելույծ դեղապատիճներ».

Եթե դեղապատիճները պարունակում են մի քանի ակտիվ նյութեր, որոնց մի մասը բնութագրվում է սովորական արտագատմամբ, իսկ մյուս մասը՝ դանդաղ, ապա դեղաձեւի առաջարկվող անվանումն է «դեղապատիճներ՝ կարգավորվող արտագատմամբ».

Եթե դեղահաբերը պարունակում են մի քանի ակտիվ նյութեր, որոնց մի մասը արտագատվում է ստամոքսում, իսկ մյուս մասը աղիներում, դեղաձեւի առաջարկվող անվանումն է «դեղահաբեր՝ կարգավորվող արտագատմամբ»:

Այն դեղաձեւերի դեպքում, որոնք թողարկվում են դեղապատրաստուկի ճշգրիտ դոզավորման իրականացումը թույլատրող դոզավորման սարքով հագեցված փաթեթվածքով (ցողաշիթեր, ցողացիւրներ, փրփուրներ, ինհալացիաների համար դեղաձեւեր), անհրաժեշտ է անվանման մեջ ներառել հետեւյալ լրացուցիչ տարրը՝ դոզավորված լինելու հատկանիշը՝ դրանք առանց դոզավորման սարքի թողարկվող համանման դեղաձեւերից տարբերելու համար: Այդ դեղաձեւերի անվանմանն ավելացվում է «դոզավորված» սահմանումը, օրինակ՝ «ցողաշիթ՝ քթի, դոզավորված»:

Պացիենտների տարիքային խմբի հատկանիշն ավելացվում է դեղաձեռի անվանմանն այն դեղապատրաստուկների դեպքում, որոնք նախատեսված են բացառապես երեխաների կողմից կիրառման համար: Այդ դեպքում դեղաձեռի անվանմանն ավելացվում է «երեխաների համար» սահմանումը, օրինակ՝ «օշարակ՝ երեխաների համար», «դեղահաբեր՝ լուծվող, երեխաների համար»: Մեծահասակների կողմից կիրառվող դեղապատրաստուկների դեպքում «մեծահասակների համար» սահմանման տեսքով տարիքային խմբի հատկանիշը դեղաձեռի անվանման մեջ չի նշվում:

Լուծույթ հանդիսացող դեղաձեռների դեպքում դեղաձեռի անվանմանը կարող է ավելացվել լուծիչի բնույթը բնորոշող հատկանիշը: Եթե լուծիչը յուղ է, ապա դեղաձեռի անվանմանն ավելացվում է «յուղային» բառը, օրինակ՝ «լուծույթ՝ արտաքին կիրառման համար, յուղային»: Եթե դեղաձեռը պարունակում է 20% (ծավալային հարաբերակցությամբ) եւ ավելի խտությամբ էթանոլ, ապա անվանմանն ավելացվում է «սպիրտային» բառը, օրինակ՝ «կաթիլներ՝ ներքին ընդունման համար, սպիրտային»: Ջրային լուծույթների դեպքում դեղաձեռի «ջրային» լրացուցիչ հատկանիշը դեղաձեռի անվանման մեջ չի նշվում:

Դեղաձեռի անվանմանը նաեւ կարող է ավելացվել համը եւ (կամ) հոտը բնորոշող հատկանիշ: Տվյալ հատկանիշի ավելացումն անհրաժեշտ է այն դեպքերում, երբ արտադրողը դեղաձեռը թողարկում է մեկ առեւտրային անվանման ներքո եւ մեկ դեղաձեռով, բայց տարբեր բուրավետիչների եւ (կամ) համային հավելումների օգտագործմամբ: Նման դեպքերում թողարկվող դեղաձեռերը տարբերակելու նպատակով դեղաձեռի անվանմանն ավելացվում է համապատասխան սահմանումը, օրինակ՝

«դեղահաբեր՝ կիտրոնի համով», «դեղահաբեր՝ արքայախնձորի համով».

«ցողաշիթ՝ քթի, էվկալիպտի հոտով», «ցողաշիթ՝ քթի, մենթոլի հոտով».

«օշարակ՝ բալի համով եւ հոտով», «օշարակ՝ սալորի համով եւ հոտով»:

Նույն սկզբունքով դեղաձեռի անվանմանը կարելի է ավելացնել

դեղապատրաստուկի մեջ շաքարի բացակայության հատկանիշն այն դեպքերում, երբ արտադրողը դեղաձեւը թողարկում է ինչպես բաղադրության մեջ շաքարների (սախարոզի եւ դեքստրոզի (գլյուկոզի)) օգտագործմամբ, այնպես էլ առանց օգտագործման մեկ առեւտրային անվանման ներքո եւ մեկ դեղաձեւով, ապա շաքարներ չպարունակող դեղաձեւի անվանմանն ավելացվում է «առանց շաքարի» բառակապակցությունը: Օրինակ՝ «դեղահաբեր՝ առանց շաքարի»: Շաքարներ պարունակող դեղաձեւերի համար լրացուցիչ հստակեցումներ չեն պահանջվում:

Դեղաձեւերի անվանումների մեջ լրացուցիչ տարրերը նշվում են հետեւյալ հերթականությամբ՝ լուծիչի բնույթի հատկանիշ, տարիքային խմբի հատկանիշ, համաբուրավետիչ հավելումներ եւ շաքարի բացակայություն:

Հոմեոպատիկ դեղապատրաստուկների համար դեղաձեւերի անվանմանն ավելացվում է «հոմեոպատիկ» սահմանումը, օրինակ՝ «գրանուլներ՝ ներծծման համար, հոմեոպատիկ», «քուլք՝ տեղային կիրառման համար, հոմեոպատիկ», «յուղ՝ ներքին ընդունման համար, հոմեոպատիկ»:

Մեկ սպառողական փաթեթվածքի մեջ մի քանի առանձին դեղապատրաստուկներ պարունակող դեղապատրաստուկների համար համակցված անվանումը ձեւավորվում է «հավաքակազմ» բառի օգտագործմամբ, որը տեղադրվում է անվանման սկզբում: Օրինակ՝ եթե փաթեթվածքը պարունակում է տարբեր բաղադրությամբ մի քանի տեսակ փրփրուն դեղահաբեր, ապա համակցված անվանումը կլինի «փրփրուն դեղահաբերի հավաքակազմ»: Եթե փաթեթվածքը պարունակում է մի քանի տեսակի դեղաձեւեր, ապա նշվում է դրանցից յուրաքանչյուրի անվանումն այբբենական հերթականությամբ՝ ավելացնելով «հավաքածու» բառը, օրինակ՝ «աղելույծ դեղահաբերի եւ երկարատեւ արտազատմամբ դեղահաբերի հավաքածու»:

Սույն անվանացանկը սպառիչ չէ: Պատրաստուկի դեղաձեւի անվանումը կազմելիս դրա հատկությունների առավել ճշգրիտ արտացոլման նպատակով հնարավոր է սույն անվանացանկում օգտագործվող, դրանում ի սկզբանե բացակայող հիմնական եւ լրացուցիչ տարրերի համակցում՝ դեղաձեւերի

անվանումները կազմելու համար: Օրինակ՝ համապատասխան հարմարանքի օգնությամբ անմիջապես աղիք ներմուծելու համար նախատեսված (ինտեստինալ ներմուծում) լուծույթ հանդիսացող պատրաստուկի համար սույն անվանացանկում բացակայում է առանձին եզրույթը: Այնուամենայնիվ, համակցելով «լուծույթ» եւ «ինտեստինալ» բառերը, որոնք առկա են այլ անվանումներում որպես հիմնական եւ լրացուցիչ տարրեր, կարելի է կազմել դեղաձեւի անվանումը՝ «լուծույթ ինտեստինալ»: Նույն սկզբունքով կարելի է կազմել դեղաձեւի անվանումը՝ համակցելով անվանման առկա հիմնական տարրը լրացուցիչ տարրի՝ սույն անվանացանկում բացակայող ներմուծման ուղու հատկանիշի հետ, օրինակ՝ «էմուլսիա՝ ռետրոբուլբար ներմուծման համար»:

Բաժնեծրարված դեղաբուսական հումք հանդիսացող եւ ջրային հանուկների պատրաստման համար նախատեսված դեղապատրաստուկների համար դեղաձեւերի անվանումներ չեն ներկայացվում: Այդ դեղաձեւերի անվանումները կազմելիս որպես հիմնական տարր օգտագործվում է արտադրող բույսի հումքային մասի անվանումը, իսկ որպես լրացուցիչ տարր՝ դրա մանրացվածության հատկանիշը, օրինակ՝ «տերեւներ ամբողջական», «ծաղիկներ մանրացված», «խոտաբույսեր փոշիացված»: Եթե այդ դեղապատրաստուկը մի քանի տեսակ դեղաբուսական հումքի խառնուրդ է, ապա որպես հիմնական տարր օգտագործվում է դեղաձեւի «հավաքածու» անվանումը, որպես լրացուցիչ նաեւ դրա մանրացված լինելը, օրինակ՝ «հավաքածու ամբողջական», «հավաքածու մանրացված», «հավաքածու փոշիացված» եւ այլն:

Հարկ է օգտագործել ստանդարտ եզրույթներ կամ դրանց համակցությունները՝ հավելվածի համաձայն դեղապատրաստուկների եւ կոմպլեկտավորող միջոցների առաջնային փաթեթվածքների տեսակներն ըստ ցանկի նշելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

դեղաձևերի անվանացանկի

ՑԱՆԿ

**դեղապատրաստուկների եւ կոմպլեկտավորող միջոցների առաջնային
փաթեթվածքների տեսակների**

I. Դեղապատրաստուկների առաջնային փաթեթվածքը

1. Ավտոմատ ներարկիչ
2. Սրվակիկ (ամպուլա)
3. Գլանանոթ (բալոն)
4. Բանկա
5. Թուղթ
6. Շիշ
7. Չարեքանոց
8. Սկավառակներ
9. Ներշնչակ
10. Քարթրիջ
11. Քարթրիջ-դոզատոր
12. Կոնտեյներ (այն դեպքերում, երբ այլ եզրույթներ
կիրառելի չեն)
13. Փաթեթ
14. Փաթեթիկ (սաշե)

15. Պահատուփ
16. Փորձանոթ
17. Պարկուճ
18. Պատիճ-կաթոցիչ
19. Փաթեթվածք՝ եզրագծային, ոչ բջջային (սթրիփ)
20. Փաթեթվածք՝ եզրագծային, բջջային (բլիստեր)
21. Ֆիլտր-փաթեթ
22. Սրվակ
23. Սրվակ-կաթոցիչ
24. Ներարկիչ
25. Ներարկիչ-ամպուլա
26. Ներարկիչ-գրիչ
27. Ներարկիչ-պատիճ

II. Կոմպլեկտավորող միջոցներ

1. Ներդրուկ
2. Դոզատոր
3. Ասեղ
4. Ներպատվաստման սարք
5. Ներշնչակ
6. Փողակ
7. Գդալ չափիչ

8. Ծխափող
9. Ծայրակալ (այն դեպքերում, երբ այլ եզրույթներ կիրառելի չեն)
10. Գլխադիր-կաթոցիչ
- 11 Պոմպ՝ ցողաշիթի համար
12. Պոմպ-դոզատոր
13. Ներուլայզեր
14. Դանակ ամպուլային
15. Կաթոցիկ
16. Ծակիչ
17. Անձեռոցիկ
18. Շառտիչ սարք (սկարիֆիկատոր)
19. Չափիչ բաժակ
20. Ձողիկ (ծղոս)
21. Սարք՝ կախելու համար
22. Չափիչ գավաթ
23. Մածկաթիակ
24. Ներարկիչ
25. Խոզանակ-ներդրուկ

Պարզաբանումներ

Սույն Ցանկի կիրառման նպատակներով օգտագործվում են հետևյալ հասկացությունները, որոնք ունեն հետևյալ իմաստը.

«կոմպլեկտավորող միջոց»՝ արտադրատեսակ, որը տեղադրվում է դեղապատրաստուկի երկրորդային (սպառողական) փաթեթվածքում եւ օգտագործվում է դեղապատրաստուկի ճիշտ դոզավորման, ներմուծման կամ կիրառման համար.

«դեղապատրաստուկի առաջնային փաթեթվածք»՝ փաթեթվածք, որն անմիջապես շփվում է տվյալ դեղապատրաստուկի հետ:

Սույն ցանկում նշված դեղապատրաստուկների առաջնային փաթեթվածքների տեսակների համար նշում են այն նյութը, որից տվյալ փաթեթվածքն արտադրվել է եւ անհրաժեշտության դեպքում՝ դրա լրացուցիչ հատկությունները: Օրինակ՝ մուգ ապակուց սրվակներ, պոլիմերային երկշերտ փաթեթներ, այլումինե բալոններ, ցածր խտության պոլիէթիլենից սրվակներ եւ այլն:

Հեղուկ եւ փափուկ դեղաձեւերի, ինչպես նաեւ պարենտերալ ներմուծման դեղապատրաստուկների համար գրանցման դոսյեի փաստաթղթերում անհրաժեշտ է նշել պոլիմերի տեսակը (օրինակ՝ պոլիէթիլեն, պոլիպրոպիլեն, պոլիվինիլքլորիդ եւ այլն)՝ հաշվի առնելով փաթեթվածքից նյութերի միգրացիայի հաշվին պոլիմերի տեսակի ազդեցությունը դեղապատրաստուկների որակի վրա: Ներքին ընդունման, արտաքին կամ տեղային կիրառման կարծր դեղաձեւերի համար (օրինակ՝ դեղահաբերի) բավարար է նշել նյութի ընդհանուր բնութագիրը (օրինակ՝ բանկաներ պոլիմերային): Թափանցիկ անգույն ապակուց պատրաստված փաթեթվածքների համար ապակու գույնի բնութագիրը չի ներկայացվում (օրինակ՝ ապակե սրվակներ):